ԳԼՈՒԽ ՂԸ.

Ամենայն պաշտօնատար յառաջ քան զստանալ նմայ նամակ պաշտօնի իւրոյ պարտէ երդնուլ 'ի վերայ Սուրբ կտակարանի խոստանալով կալ և մնալ նմա հաւատարիմ տանն հայոց, որպէս 37. երորդ յօրէնս։

ԳԼՈՒԽ ՂԹ.

Ամենայն իշխան 'ի վերայ քաղաքաց ընդ երեսս բոլոր վիճակի իւրոյ ունիցի զօրութիւն իբրև նախարարութեան։

ԳԼՈՒԽ Ճ.

Ամենայն իշխանանիստ քաղաքի առաքեսցի 'ի տանէն հայոց երկուս զօրագլուխս, և մի Օրինագէտս մինն պաշտօնի սպարապետութեան միւսն ասպետութեան և Օրինագէն դատաւորութեան։

ԳԼՈՒԽ ՃԱ.

Բոլոր աշխարհն ընդ հովանաւորութեան հայոց 'ի ծայրագոյն մայրաքաղաքէ մինչև 'ի կըրտսեր գեօղս, և 'ի մէնջ վրանաբնակաց հարկ լիցի ամենայն քաղաքի, գեօղի որ իցէ մինչև տուն